Արձանագրություն N 2

«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2017-35» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

22 սեպտեմբեր 2017թ.
ժամը 12:00

Մասնակցում էին
հանձնաժողովի
Նախագահող՝ Ա.Սահակյան
Անդամներ՝ Ա. Սանթրոսյան
Քարտուղար՝ Լ. Մկրտչյան
Բացակա՝ Գ. Շարաֆյան

1. «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2017-35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ

Ընդունել ի գիտություն, որ՝

Հանձնաժողովի նախագահողը հրապարակել է ՀՎԿԱԿ ՊՈԱԿ կարիքների համար «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2017-35» ծածկագրով մրցույթի նախահաշվային գինը, որը ներկայացված է հավելված 1-ում:

1.1 Գնային առաջարկներ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները՝

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «Բոնապ» ՍՊԸ | ք. Երևան, Արաբկիր 41փ. 12/1, հեռ. 010 256531 |
| 2. | «Լամեքս» ՍՊԸ | ք. Արմավիր, Երևանյան 4/15, հեռ. 055 959585 |
| 3. | «Կարեն և Սուքոյան ԱՁ» | ք. Երևան, Տիգրան Մեծի 3-րդ նրբ., տուն 22 հեռ. 010 527232 |

1.2 Տվյալներ ծրարը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակից բոլոր ընկերությունների կողմից ներկայացված ծրարները կազմված են «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2017-35» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.3 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.
«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2017-35» ծածկագրով մրցույթի բոլոր մասնակիցները փակ կնքված ծրարով ներկայացրել են.

- դիմում գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու /հավելված 1
- հայտարարություն գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանության մասին,/հավելված 2
- տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին,/հավելված 2.1
- հայտարարություն որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին, /հավելվաց 3
- գնային առաջարկ, /հավելված 4
- տուժանքի մասին համաձայնագիր (հայտի ապահովում) հավելված 8

Վերոնշյալ կազմակերպությունների ներկայացված փասթաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

1.4 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.

Յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2017-35» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**1.5 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ / հհ դրամ/**

Ընթացակարգի հրավերով սահմանված կարգին բավարարող մասնակիցների գնային առաջարկները ներկայացված են հավելված 1-ում:

**2. Հանձնաժողովը որոշեց՝**

2.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած ընկերությունների ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայության վերաբերյալ:

2.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017թ. սեպտեմբերի 27-ին ժամը 12:30-ին:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 2 Դեմ՝ 0

**3 . Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները՝**

Հանձնաժողովի

Նախագահող՝ ______________ Ա.Սահակյան

Անդամներ՝ ______________ Ա.Սանթրոսյան

Քարտուղար՝ ______________ Լ. Մկրտչյան